

Երևան, 18 հունիսի, 2019

Կարծիք ԻՊԱՍ (2019)ՀԿՕ01/06

ԿԱՐԾԻՔ

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն  
0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11  
+374 10 505303  
info@prwb.am

Մույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել  
հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին



## ԿԱՐԾԻՔ

### «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կարգը:

Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվում է լրացնել Օրենքի 41-րդ հոդվածը՝ նշելով, որ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելիս Հանրային պաշտպանի գրասենյակը հանրային պաշտպանություն կարող է կազմակերպել նաև՝

1) **հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների**, փաստաբանական դպրոցի ունկնդիրների, ինչպես նաև **կազմակերպությունների իրավաբանների միջոցով**, որոնք կամավոր ընդգրկվել են հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում: Անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում ընդգրկվելու, ինչպես նաև այդ ցուցակը համալրելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը.

2) **հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների միջոցով դատական ներկայացուցչության իրականացմամբ**, որի դիմաց վճար ումները կատարվում են հանրային պաշտպանի համար նախատեսված միջոցների խնայողության հաշվին, ինչպես նաև Օրենքով նախատեսված հատուկ ֆոնդի միջոցներից:

Այսինքն՝ Նախագիծը սահմանում է, որ բացի Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակիցներից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով կարող են կամավորության հիմունքներով ներգրավվել հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբաններ, կազմակերպությունների իրավաբաններ կամ փաստաբանական դպրոցի ունկնդիրներ:

Նախագիծը նշված դրույթով անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերող անձանց տրամադրում է երկու առավելություն.

❖ Ֆինանսավորման հնարավորություն դատական ներկայացուցչության համար, և



❖ Դատական ներկայացուցչություն իրականացրած փաստաբանների ցանկի հրապարակում /Նախագծում նախատեսված է, որ **Փաստաբանների պալատը հրապարակում է ամեն տարի իրավաբանական օգնություն ցուցաբերած փաստաբանների ցանկը/**

**Ֆինանսավորման հնարավորությունն դատական ներկայացուցչության համար**

Հետազոտությունները ցույց են տվել, որ Հանրային պաշտպանի գրասենյակը խիստ ծանրաբեռնված է, և բազմաթիվ սոցիալական խնդիրներ ունեցող քաղաքացիներ աջակցություն են փնտրում Հանրային պաշտպանի գրասենյակից դուրս: Բացի դա, ծանրաբեռնվածությունն ազդում է գործերի վարման որակի վրա, այս բացասական ազդեցությունն անխուսափելի է<sup>1</sup>:

Մա է պատճառը, որ շատ երկրներում փաստաբանների կողմից pro Bono ծառայությունների մատուցումը պարտադիր է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետությունները առավելություններ տրամադրում են իրավաբանական կազմակերպությունների կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար, իրավաբանական խորհրդատվությունների, օրենսդրական լոբբինգի, անվճար իրավական թրեյնինգների համար (Վերջիններն առավել տարածված են ԱՄՆ-ում<sup>2</sup>): Մոլորվայում, օրինակ, որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբաններին վճարվում է հաստատագրված գումար՝ յուրաքանչյուր գործի համար՝ կախված Ազգային խորհրդի կողմից հաստատված տարիֆից, Մեծ Բրիտանիայում Պետության կողմից իրավաբանական օգնություն և տրամադրվում է բոլոր գործերով՝ բացառությամբ այնպիսի գործերի, ինչպիսիք են խնամակալությունը, գրպարտությունը և այլն: Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովը ֆինանսական հատկացումներ տրամադրում է ֆիզիկական անձանց՝ հիմնվելով վերջիններիս ֆինանսական վիճակի վրա<sup>3</sup>:

Նախագծում առաջարկվում է անվճար իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբաններին կատարել վճարումներ Հանրային պաշտպանի գրասենյակի համար

<sup>1</sup> Տե՛ս Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի կարիքները, «Իրավունքների պաշտպանություն առանց պաշտպանների» ՀԿ

<sup>2</sup> <https://www.thebalancecareers.com/are-pro-bono-services-the-same-as-volunteer-services-3515203>  
<https://practice.findlaw.com/practice-guide/tax-deductions-for-lawyers-providing-pro-bono-services.html>

<sup>3</sup> Տե՛ս Ա. Ղազարյան, Բ.Մետցկին, Ա. Ջեյնալյան, Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերը և պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում, Կարիքների գնահատում, Երևան, ապրիլ 2015



նախատեսված միջոցների խնայողության հաշվին, կամ Օրենքով նախատեսված հատուկ ֆոնդի միջոցներից:

Գտնում ենք, որ խնայողությունների և հատուկ ֆոնդերի հաշվին վճարումներ կատարելու վերաբերյալ դրույթները հստակ չեն: Այսպես՝

- պարզ չէ, թե ինչ խնայողություններ կարող են առաջանալ, և ինչքան կկազմի դրանց չափը,
- հստակեցված չէ նաև, թե ինչ սկզբունքով են խնայողությունների հաշվին վճարումներ կատարելու հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբաններին /ովքեր են վճարվելու և ինչ չափով/
- պարզ չէ նաև հատուկ ֆոնդի համալրման կարգը,
- պարզ չէ նաև, թե ովքեր են վճարվելու, ինչ աշխատանքի համար և ինչ չափով. արդյո՞ք իրավաբանական օգնություն ցուցաբերած փաստաբաններին վճարումը կատարվելու է ընտրողական մակարդակում:

**Դատական ներկայացուցչություն իրականացրած փաստաբանների ցանկի հրապարակում**

Պարզ չէ, թե ինչ է իրենից ենթադրում նշված ցուցակում հայտնվելը, ինչ առավելություններ կարող են ունենալ առաջին կետում նշված անձինք, որ կամավոր հիմունքներով ընդգրկվեն նշված ցուցակում:

Անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերած անձանց ցուցակագրման լավ փորձ ունի, օրինակ, Ամերիկայի միացյալ նահանգները, որտեղ անցկացվում է ամենամյա առավել շատ քանակությամբ pro Bono ծառայություններ մատուցած փաստաբանների մրցանակաբաշխություն. փորձը ցույց է տվել, որ այս գործընթացի արդյունքում.

- աճում է նման ծառայություններ մատուցած ընկերության հեղինակությունը,
- pro Bono ծառայությունների մատուցումը խթանում է pro Bono ծառայությունների աճը, ինչն իր հերթին երկուստեք օգտակար է, մի կողմից՝ առավել մեծ թվով քաղաքացիներ սկսում են ստանալ աջակցություն, մյուս կողմից՝ pro Bono ծառայություններ մատուցող ընկերություններում աշխատող կրտսեր իրավաբանները թիմային աշխատանքի շնորհիվ բարելավում են իրենց հմտությունները, կարողանում



են կողմնորոշվել իրենց հետագա կարիերայի հարցում, ձեռք են բերում փորձ և վստահություն<sup>4</sup>:

Հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի գերծանրաբեռնվածությունը, անվճար իրաքանական օգնության կարևորությունը ՀՀ-ում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված այնպիսի հիմնարար իրավունքների՝ ինչպիսին արդար դատաքննությունը, զենքերի հավասարությունն ու մրցակցությունն են, ապահովումը, pro Bono ծառայությունների մատուցման հաջողված փորձն ամբողջ աշխարհում՝ **Առաջարկում ենք**

❖ **առավել հստակ կառուցակարգ սահմանել բոլոր այն դեպքերում, երբ անձանց անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն են հայտնում Հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանները՝ նախատեսելով արտոնություն՝ անդամավաճար վճարելու պարտականությունից ազատելու տեսքով այն ժամանակամիջոցի համար, որի ընթացքում փաստաբանը տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն:**

❖ **ներդնել հաշվետվողականության համակարգ, երբ ամեն տարի փաստաբանները զեկուցում են իրենց կատարած պրո բոնո ծառայությունների մասին, բացի դա, ինչպես նաև այն հանգամանքների մասին, որոնց պատճառով փաստաբանը չի մատուցել pro Bono ծառայություններ:**

II. Նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ անձն իրավունք ունի դիմելու նոր արտոնագիր ստանալու համար արտոնագրի գործողությունը դադարեցնելուց մեկ տարի անց:

Անհայտ է մնում, թե այն դեպքում, երբ անձի փաստաբանական գործունեության արտոնագիրը դադարեցվել է Հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից մեկով, արդյոք անձը կարող է կրկին դիմում ներկայացնել՝ արտոնագիր ստանալու համար:

Նախագծի 14-րդ հոդվածը միայն մեկ կարգավորում է նախատեսում. «1.1 Փաստաբանական դպրոցի ունկնդիր (հավակնորդ) չի կարող լինել այն անձը, փաստաբանական գործունեության արտոնագիրը դադարեցվել է որպես կարգապահական տույժ, և չի լրացել սույն Օրենքով կարգապահական տույժի չենթարկված համարվելու համար նախատեսված ժամկետը (2 տարի):

<sup>4</sup> Տե՛ս H. Harutyunyan, Whether the pro-bono work is the best way to protect public interests and to make contribution to justice, 2012



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

Անհայտ է մնում, թե մնացած հիմքերով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարելու դեպքում անձը արդյոք չի կարող կրկին դիմել՝ Արտոնագիր ստանալու համար, թե Օրենքի նշված հոդվածն ուժը կորցնելը պայմանավորված է սահմանված 1 տարի ժամկետը վերացնելու հանգամանքով, և անձը կարող է ցանկացած ժամանակ կրկին դիմում ներկայացնել՝ արտոնագիր ստանալու համար: